# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ

# ՀՐԱՄԱՆ № 87

«24» 08 2020 թ. գ. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մանուկի Մելքոնյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և Գևորգ Սուրենի Բաղդասարյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար՝ 24.08.2020թ. N 261-Ա և 262-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Դ.Մելքոնյանի մոտ առկա վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Կատարել Դ.Մելքոնյանի կողմից՝ իր մոտ առկա վարույթների, փաստաթղթերի ու գույքի հանձնում, իսկ Գ.Բաղդասարյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Ասլանյան Հայկ - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Մարտիրոսյան Հայկ - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Խալաթյան Նաիրա - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

| | |
|---|---|
| Բաղդասարյան Լևոն - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Միքայելյան Լոլա - | Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությանն աջակցող բաժնի գլխավոր մասնագետ |
| Հովսեփյան Մարո - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2020 թվականի սեպտեմբերի 15-ը:

Ա.ԴԱՎԹՅԱՆ